ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ավտովարկավորում առաջնային և երկրորդային շուկայից

Հրապարակվել է՝ 22.07.2025թ.

1	Վարկի հիմնական չափանիշներ		
		Առաջնային շուկա	**Երկրորդային շուկա**
1.1	Նպատակային նշանակություն	Վարկ ֆիզիկական անձանց՝ ավտոսրահներում նոր կամ օգտագործված ավտոմեքենաներ ձեռք բերելու նպատակով՝ անձնական/ընտանեկան օգտագործման համար	Վարկ ֆիզիկական անձանց՝շուկայից/ֆիզիկական անձանցից օգտագործված ավտոմեքենաներ ձեռք բերելու համար՝ անձնական/ընտանեկան օգտագործման նպատակով, այդ թվում՝ հայտ ներկայացնելուց առաջ 30 օրվա ընթացքում ներկրված ավտոմեքենաներ, որոնք բավարարում են Բանկի նվազագույն պահանջներին
1.2	Վաճառքի ուղի	Հաճախորդի փաստացի բնակության վայրին/աշխատանքին ամենամոտիկ ավտոսրահը և մասնաճյուղը	Հաճախորդի փաստացի բնակության վայրին / աշխատանքին ամենամոտիկ մասնաճյուղը
1.3	Վարկի արժույթ	ՀՀ դրամ	
1.4	Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք[1]	12-14%	12.5-14.5%
1.5	Տարեկան անվանական տոկոսադրույքի փոփոխում	Ուշադրություն՝ Չի թույլատրվում ավտոմեքենայի օգտագործումը ձեռնարկատիրական գործունեության համար (այդ թվում՝ որպես տաքսի): Թույլատրվում է օգտագործել միայն ՀՀ տարածքում (ինչը սահմանվում է վարկային պայմանագրերում): Որպես տաքսի ավտոմեքենայի օգտագործման բացահայտման դեպքում՝ Բանկն իրավունք ունի կամ պահանջել ամբողջական վաղաժամկետ մարում, կամ դրույքը կբարձացվի մինչև 24% (փաստացի):	
1.6	Տարեկան փաստացի տոկոսադրույք	18-24%	18.5-24%
1.7	LTV (Վարկ/Գրավ) առավելագույն հարաբերակցություն	80%	70-80%
1.8	Մեքենայի խումբ՝ ըստ արտադրության երկրի	Խումբ 1՝ Գերմանիայի, Ճապոնիա, ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Չեխիա, Իտալիա երկրների արտադրության մեքենաներ, այդ թվում նաև KIA և HYUNDAI մակնիշի ավտոմեքենաներ Խումբ 2՝ այլ երկրների արտադրության մեքենաներ	
1.9	Նվազագույն նախնական կանխավճար	20%	Խումբ 1՝ 20% Խումբ 2՝ - մինչև 8 տարի (ներառյալ)՝ 20% - 9-10 տարի (ներառյալ)՝ 30%
1.10	Վարկի առավելագույն գումար (կախված տ/մ խմբից)	Խումբ 1՝ 28,000,000 ՀՀ դրամ Խումբ 2 ՝ 7,000,000 ՀՀ դրամ	Խումբ 1՝ 16,000,000 ՀՀ դրամ Խումբ 2 ՝ 5,000,000 ՀՀ դրամ
1.11	Վարկի նվազագույն գումար	1,000,000 ՀՀ դրամ	
1.12	Վարկի առավելագույն ժամկետ	5 տարի	
1.13	Վարկի նվազագույն ժամկետ	1 տարի	
1.14	Վարկի մարման եղանակ	1. Հավասարաչափ ամսական (անուիտետային) վճարումներ 2. Մնացորդային վճարում. մայր գումարի 70% մարվում է ամսական անուիտետային ժամանակացույցով մինչև ժամկետի վերջ, մայր գումարի 30% մնում է մարման համար ժամկետի վերջում:	1. Հավասարաչափ ամսական (անուիտետային) վճարումներ 2. Մնացորդային վճարում. մայր գումարի 80% մարվում է ամսական անուիտետային ժամանակացույցով մինչև ժամկետի վերջ, մայր գումարի 20% մնում է մարման համար ժամկետի վերջում:
1.15	Վարկի տրամադրման եղանակ	Միանվագ, անկանխիկ	
1.16	Վարկի վաղաժամկետ մարում	Վաղաժամկետ մարման մասով սահմանափակումներ չկան: Վարկառուն/ները իրավունք ունի/են՝ - առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ): Այդ դեպքում Վարկառուն/ները պարտավոր է/են վարկի փաստացի օգտագործված օրերի համար վճարել վարկային պայմանագրով նշված փաստացի տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները: **- վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներից շուտ մարել վարկը: Տվյալ դեպքում Վարկառուի/ների նկատմամբ տուժանք չի կիրառվում, ընդ որում՝**	

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

		• ենթակա են նվավեցման վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների, միջնորդավճարների և սպասարկման վճարների ծախսը: **• ենթակա չեն նվավեցման սույն պայմանագրի պայմանների չկատարմա կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված տուժանքները, վարկի մարման և/կամ տոկոսների վճարման նպատակով կատարված փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար վճարված գումարները, նոտարական վավերացման, պետական գրանցման (նշված ծառայությունների առկայության դեպքում) դիմաց կատարված վճարները, հավելյալ՝ սույն վարկի հետ կապ չունեցող, վարկառուի ցանկությամբ ընտրված ապահովագրական ծառայությունների դիմաց կատարված ապահովագրավճարները:** **Վարկի ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում ենթակա են վերադարձման նախապես վճարված, սակայն փաստացի չօգտագործված ամիսների/օրերի համար կատարված վճարները:**	
1.17	Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող տույժ	**Վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկի մայր գումարը և/կամ տոկոսագումարները չվճարելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել վարկի ժամկետանց մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը՝ պահպանելով չժամկետանցված մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը, և ժամկետանց վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ (մինչև դրանց փաստացի վճարումը) կիրառել տույժ՝ տարեկան 48% (յուրաքանչյուր ժամկետանց օրացույցային օրվա համար), սակայն ոչ ավել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուժանքի առավելագույն չափը, իսկ նշված առավելագույն չափին հասնելուց հետո Բանկն իրավունք ունի վերականգնել վարկի մնացորդի (ներառյալ ժամկետանց մասի) նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը:**	
1.18	Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքներ	**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՐՎԵԼ ՁԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:** **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ (ՏՈՒՆԸ, ՄԵՔԵՆԱՆ ԿԱՄ ԱՅԼ) ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:** **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:**	
1.19	Վարկի տրամադրման նախնական որոշման կայացման և հաճախորդին տեղեկացման առավելագույն ժամկետ	5 (հինգ) աշխատանքային ժամ	2 (երկու) աշխատանքային օր
1.20	Վարկառուին վարկի տրամադրման ժամկետ	Համապատասխան պայմանագրերը կնքելուց և պետական լիազոր մարմիններում համապատասխան ձևակերպումներ իրականացնելուց հետո	
2	**Բանկի միջնորդավճարներ**		
2.1	Հայտի դիտարկման միանվագ միջնորդավճար	Նախատեսված չէ	
2.2	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	Վարկի գումարի 2%, բայց ոչ ավել, քան 70,000 ՀՀ դրամ	Վարկի գումարի 2%, բայց ոչ ավել, քան 75,000 ՀՀ դրամ
2.3	Վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճար (ամսական միջնորդավճարի հաշվարկը իրականացվում է վարկի տրամադրման օրվանից)	Այն դեպքում, եթե կանխավճարը < 45%, հաճախորդի ընտրությամբ հնարավոր է 2 տարբերակներից մեկը՝ 1) հայտի ձևակերպման պահին գրավի–ավտոմեքենայի շուկայական արժեքի 0.23%, 2) վարկի սկզբնական գումարի 0.23%: Այն դեպքում, եթե կանխավճարը ≥ 45%՝ 0.23% վարկի սկզբնական գումարից:	
2.4	Միջնորդավճար վարկը ձևակերպելու համար (երկրորդային շուկայից, հաճախորդի ցանկության դեպքում)	Սեփականության իրավունքի գրանցման վկայականի ստացում – 6,500 ՀՀ դրամ Հաշվառման վկայագրի ստացում (տեխ. անձնագիր) – 7,500 ՀՀ դրամ Պետհամարանիշի ստացում – 13,500 ՀՀ դրամ	
2.5	Գրավից ազատում (պարտադիր)	1,000 ՀՀ դրամ	
3	**Ապահովություն և ապահովագրություն**		
3.1	Գրավի առարկա	Ձեռք բերվող ավտոմեքենա	
3.2	Գույքի շուկայական արժեքի գնահատում	Ավտոսրահի կողմից տրամադրված տեղեկանքում նշված ավտոմեքենայի արժեքի հիման վրա	Գնահատումը իրականացվում է Բանկի կողմից՝ անվճար
3.3	Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն (ԿԱՍԿՈ)	Ապահովագրումն իրականացվում է ՀՀ և Վրաստանի տարածքում մեկ տարի ժամկետով: Ընդ որում՝ 1) վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճարը գրավի շուկայական արժեքից սահմանելու դեպքում ապահովագրությունը իրականացնում է ավտոմեքենայի շուկայական արժեքի գումարով: Յուրաքանչյուր հաջորդ տարի ապահովագրության պայմանագիրը երկարացվում է 1 (մեկ) տարով՝ ավտոմեքենայի նախորդ տարվա շուկայական արժեքի գումարով, հանած 10%: 2) վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճարը վարկի սկզբնական գումարից սահմանելու դեպքում ապահովագրությունը իրականացնում է վարկի հիմնական գումարով: Յուրաքանչյուր հաջորդ տարի ապահովագրության պայմանագիրը երկարացվում է 1 (մեկ) տարով՝ վարկի գումարի մնացորդի չափով: Ընդ որում՝ ավտոմեքենայի շուկայական արժեքը յուրաքանչյուր տարի նվավեցվում է 10%-ով:	

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

		Վերջին տարում ապահովագրությունն իրականացվում է մնացած ժամկետի համար: Ապահովագրությունը չի երկարաձգվում, եթե հաճախորդի օբյեկտիվ ռիսկը 5 է: Ապահովագրությունը գործում է ՀՀ և Վրաստանի տարածքում: Ապահովագրության պայմանները ներկայացված են Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/insurance/kasko հասցեով: Ապահովագրական ընկերությունների մասով անհրաժեշտ տեղեկությունները (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունների ցանկը, անվանումները, գտնվելու վայրերը, հեռախոսի համարները) կարող եք գտնել Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/insurance/kasko հասցեով:
3.4	Հաճախորդի կյանքի ապահովագրություն վարկի ողջ ժամկետի համար	Ապահովագրվում է դժբախտ պատահարի արդյունքում աշխատունակության կորուստը /ապահովագրվում է Վարկառուն/համավարկառուն և այն անձինք, որոնք կրում են համապարտ /հաճախորդին հավասար/ պատասխանատվություն բանկի առջև վարկի մարման համար/ եկամուտներին համապատասխան/ վարկի մնացորդի չափով
4	**Վարկառուին/Համավարկառուին ներկայացվող պահանջներ**	
4.1	Կարգավիճակ	ՀՀ ռեզիդենտ, ով ունի անձը հաստատող փաստաթղթում նշված մշտական գրանցման կամ փաստացի բնակության հասցե
4.2	Համավարկառու	Ֆիզիկական անձ, ով հանդիսանում է Վարկառուի կինը/ ամուսինը կամ գտնվում է Վարկառուի հետ ազգակցական կապի մեջ (ծնողներ, չափահաս երեխաներ, եղբայր/ քույր, եղբոր/քրոջ կին/ամուսին, կնոջ/ամուսնու եղբայր/քույր, կնոջ/ամուսնու ծնողներ, հորաքույր/մորաքույր, հորեղբայր/մորեղբայր, տատիկներ, պապիկներ): Համավարկառուների քանակը չպետք է գերազանցի 2:
4.3	Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Բանկի ներքին իրավական փաստաթղթերի համաձայն
4.4	Ընդհանուր աշխատանքային փորձ	1. Նվազագույնը 4 ամիս չընդհատված աշխատանքային փորձ վերջին աշխատանքային վայրում: 2. Այն դեպքում, երբ հաստատվում է միայն աշխատանքի փաստը՝ միայն մշտական աշխատանքային վայրի նկատմամբ պահանջ: Այն դեպքում, եթե հաճախորդը չի աշխատում, ապա նա պետք է ունենա երկրորդային եկամուտներ: Աշխատանքային ստաժը չի պահանջվում միայն «1000+ե հիմնադրամի հատուցման գումարներից ստացած եկամուտների հիման վրա հայտերի դեպքում:
4.5	Վարկառուի տարիք	Վարկառուի տարիքը վարկը ստանալու պահին պետք է լինի 21 տարեկանից ոչ պակաս, վարկի մարման պահին վարկառուի տարիքը չպետք է գերազանցի թոշակի անցնելու տարիքը:
5	**Վճարունակությանը ներկայացվող պահանջներ**	
5.1	Վճարունակության գնահատում	Այն դեպքում, երբ հաճախորդը վճարում է 40% կանխավճար, ապա ստուգվում է միայն հաճախորդի աշխատանքի փաստի առկայությունը: Այն դեպքում, երբ հաճախորդը վճարում է 50% կանխավճար, ապա ստուգվում է միայն հաճախորդի աշխատանքի փաստի առկայությունը:
6	**Լրացուցիչ պայմաններ**	
6.1	**Վարկային ծառայությունից օգտվելու համար հաճախորդը Բանկում պետք է ունենա բանկային հաշիվ:**	
6.2	Բանկային հաշիվների բացում/վարում	Համաձայն Բանկի սակագների, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/accounts-and-payments հասցեով:
6.3	Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում	"ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ գործող "Բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների" համաձայն, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/secondary/vypiski հասցեով:
6.4	Վարկային միջոցների կանխիկացում	Համաձայն հաշվի սպասարկման սակագների, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/accounts-and-payments հասցեով:
6.5	**[1] Հաճախորդի կողմից Բանկում աշխատավարձ ստանալու դեպքում գործում են վեղչեր: Բանկում աշխատավարձ չստանալու դեպքում նշված վեղչը կարող է չեղարկվել, որի արդյունքում վարկի անվանական տոկոսադրույքը կբարձրանա տվյալ վեղչի չափով:**	

Առաջնային/Երկրորդային շուկայից ավտովարկավորման առաջնային փուլում Վարկառուի/Համավարկառուի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	
1	Պատշաճ կերպով լրացրած Դիմում-հայտ
2	Անձը հաստատող փաստաթուղթ - ՀՀ քաղաքացիների դեպքում՝ անձնագիր կամ նույնականացման քարտ, ոչ ՀՀ քաղաքացիների դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ: ՀՀ քաղաքացու դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ) կամ նույնականացման քարտ*, բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք Եթե Վարկառուն/Համավարկառուն ամուսնացած է, ապա նաև կնոջ/ամուսնու փաստաթղթեր * Նույնականացման քարտի ներկայացման դեպքում պարտադիր է հանրային ծառայությունների համարանիշի առկայությունը նույնականացման քարտի վրա
3	Հիմնական գործատուից եկամուտների վերաբերյալ տեղեկանք և/կամ այլ եկամուտները հավաստող փաստաթղթեր (միայն այն դեպքում, եթե վարկառուն աշխատավարձը ստանում է ոչ ՎՏԲ Բանկի միջոցով) կամ եկամուտները հաստատող փաստաթղթերի պատճեններ (միայն այն դեպքում, եթե վերջին օրացուցային ամսվա ընթացքում հաճախորդը ձևակերպել է այլ վարկ Բանկում, որի ժամանակ տրամադրվել է եկամուտների վերաբերյալ տեղեկանքի օրիգինալը)

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

4	Առաջնային շուկայից ավտովարկավորման դեպքում՝ Վաճառող-կազմակերպությունից տեղեկանք ավտոմեքենայի գնի և մոդելի վերաբերյալ/ Երկրորդային շուկայից ավտովարկավորման դեպքում՝ Վաճառողի անձը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ ՀՀ ավտոմեքենայի ներմուծման և ներմուծումից ոչ ավել, քան 30 օր առաջ ավտովարկավորման հայտի ներկայացման: Եթե ՏՄ-ն ՀՀ տարածք է ներմուծվել ոչ ավել, քան 30 օր առաջ՝ սեփականության վկայական (եթե ավտոմեքենան հաշվառված է ՃՈ-ում), տեխ. անձնագիր (այդ թվում՝ ժամանակավոր/առկայության դեպքում/) կամ մաքսային հայտարարագիր կամ փոխադրման ամփոփագիր:
5	**Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են պահանջվել այլ փաստաթղթեր: շտ փաստաթղթերի ցանկ, եթե հաճախորդի**

Ուշադրություն՝
Հաճախորդի վարկային հայտը մերժվում է, եթե՝
- **Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր,**
- **Հաճախորդը չի բավարարում Բանկի նվազագույն պայմաններին,**
- **«ԱՔՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը (առկայության դեպքում նաև Համավարկառուները/Երաշխավորները) ունի բացասական վարկային պատմություն,**
- **Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ հաճախորդը վարկունակ չէ,**
- **Վարկավորման գործընթացի արդյունքում հաճախորդի վերաբերյալ հայտնի է դարձել այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկության հավաստիությունը:**

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ՝ https://www.vtb.am/am/information/raschet-fakticheskoy-stavki ՀԱՍՑԵՈՎ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՁԵՐ ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄՈՎ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՈՉ ԱՎԵԼԻ, ՔԱՆ ՏԱՐԻՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ, ԵՎ ԱՅԴ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄԸ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՆԱԼՈՒՑ 30 ՕՐ ՀԵՏՈ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԲԱՆԿԸ ՁԵՋ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ "ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ" ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ https://www.fininfo.am/compare-mortgage-loan

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Բանկը՝ "Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է Հաճախորդից "Ճանաչիր քո հաճախորդին" ("Know your customer") սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝
Վարկային պատմության էությունը և դրա կարևորությունը՝
Վարկային պատմությունը հաճախորդի ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է, ինչպես վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի (ԱՔՌԱ) կողմից: Այսինքն վարկային

պատմությունը ցույց է տալիս, թե հաճախորդը ինչպես է կատարել և շարունակում կատարել իր բոլոր ֆինանսական պարտավորությունները:
Այն պարունակում է հաճախորդի ստացած վարկերի, դրանից բխող մարումների կատարման, այլ մարդկանց տրված երաշխավորությունների, ժամկետանց վարկերի առկայության, ինչպես նաև դրանց համար սահմանված տույժ ու տուգանքների մասին տեղեկատվություն:

Ինչպես վարվել սխալ կամ թերի վարկային պատմությունը փոխելու համար՝
Եթե վարկառուի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման և ուղղման նպատակով վարկառուն՝ համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթների, կարող է այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող ֆինանսական կազմակերպություններին: Տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում վարկային բյուրոյին ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Մանրամասների համար՝ www.abcfinance.am, www.acra.am:

Վարկային ՍՔՈՐ գնահատականի էությունը՝
Բանկը վարկ տրամադրելու նպատակով վարկառուին գնահատում է բալային համակարգի միջոցով, որի արդյունքում ձևավորվում է ՍՔՈՐ գնահատականը: Այն իրենից ներկայացնում է մի շարք համախմբված գործոնների ամբողջականություն, որոնցից է, օրինակ, վարկային պատմությունը, անձնական տվյալները և այլ գործոններ: Մանրամասների համար՝ www.abcfinance.am, https://acra.am/

ՍՔՈՐ գնահատականի կարևորությունը՝
Ինչու՞ է կարևոր ունենալ բարձր ՍՔՈՐ գնահահատական: Նպատակը մեկն է՝ այն հարկավոր է Բանկին հասկանալու համար, թե որքան ռիսկային է հաճախորդին վարկ տրամադրելը: Յուրաքանչյուր ՍՔՈՐ-ի տեսակ ունի իրեն բնորոշ գնահատականի միջակայքը և որքան հաճախորդի գնահատականը մոտ է առավելագույն շեմին, այդքան ավելի բարձր է վարկ ստանալու հավանականությունը: Բարձր ՍՔՈՐ-ը վկայում է ցածր ռիսկի մասին և հակառակը՝ ցածր ՍՔՈՐ-ը վկայում է բարձր ռիսկի մասին:

Կիրառվող ՍՔՈՐ-ի տեսակը և նրա վրա ազդող հիմնական գործոնները՝
Բանկն առաջնորդվում է իր սեփական սքորինգային համակարգով, որի հաշվարկի մանրամասները հանդիսանում են առևտրային գաղտնիք: Սակայն կարող ենք նշել մի քանի գործոն, որոնք ազդում են ՍՔՈՐ-ի վրա՝
- **հաճախորդի վարկի մարումների պատմություն (դրական վարկային պատմությունը բարձրացնում է ՍՔՈՐ-ը, իսկ մարումների ուշացումները իջեցնում են ՍՔՈՐ-ը),**
- **հաճախորդի վարկերի քանակ (բազմաթիվ գործող վարկերի առկայությունը իջեցնում է ՍՔՈՐ-ը),**
- **հաճախորդի սոցիալական գործոններ՝ տարիք, աշխատավարձ և այլն (կարող են ունենալ ՍՔՈՐ-ի վրա ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն, կախված գործոնի տեսակից):**

Նշենք նաև, որ վարկային պատմության հարցումը կարող է ազդեցություն ունենալ վարկային ՍՔՈՐ գնահատականի վրա (կարող է իջեցնել գնահատականը), որն էլ իր հերթին կարող է ազդել Բանկի հաճախորդին վարկ տրամադրելու որոշման վրա և հանդիսանալ բացասական որոշման կայացման պատճառ:

Ինչպես բարելավել վարկային պատմությունը և ՍՔՈՐ գնահատականը՝
Վարկային պատմությունը և ՍՔՈՐ գնահատականը բարելավելու համար հարկավոր է բացառել վարկերի մարումների ուշացումները՝ կատարելով այն սահմանված գրաֆիկին համապատասխան, մարել կամ նվազեցնել վարկային պարտավորությունները, նվազեցնել վարկերի քանակը՝ թեթևացնելով վարկային բեռը, նվազեցնել տրված երաշխավորությունները՝ կրճատելով դրանց քանակը, գումարը, ինչպես նաև, առկայության դեպքում ապահովել այս մասով ժամկետանց պարտավորությունների լրիվ մարումը: Հաճախորդի արդեն գրանցված վատ վարկային պատմությունը կարող է վերափոխվել յուրաքանչյուր հաջորդ վարկիընթացքում հաճախորդի վարքագծի փոփոխության և պարտաճանաչության արդյունքում: Ուստի վարկային պատմության և ՍՔՈՐ-ի վատթարացումից խուսափելու և բարելավումը ապահովելու համար պետք է բացառել ընթացիկ վարկերի գծով պարտավորությունների կատարման նույնիսկ մեկօրյա ուշացումները, լիովին մարել նախկինում գոյացած ժամկետանց վարկային վճարների ուշացումները, խուսափել ապագայում անվստահելի անձանց համար երաշխավոր դառնալուց, թեթևացնել վարկային բեռը և այլն:

Զգուշացում՝ Ձեր կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում՝ վարկատուն տեղեկատվությունը կտեղադրի վարկային ռեգիստրում, որտեղ ձեվավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը: Ուշադրություն՝ վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ: